ք. Երևան, Մ. Մկրտչյան 5 04 փետրվարի 2019 թվական

Արձանագրություն № 2

ՀՀ Շուկայի վերահսկողության տեսչական մարմնի կառավարման խորհրդի նիստի

Նախագահ՝ Տիգրան Խաչատրյան

Քարտուղար՝ Սուրեն Պետրոսյան

Ներկա էին խորհրդի 9 անդամներից 8-ը:

Բացակայում էր՝ Արմեն Հայրապետյան:

Հրավիրվածներ՝ Շուկայի վերահսկողության տեսչական մարմնի ղեկավարի տեղակալ՝ Արթուր Մկրտչյան և ՀՀ վարչապետի աշխատակազմի Տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի փորձագետ՝ Տարոն Հակոբյան:

ՕՐԱԿԱՐԳ

1. Նախորդ խորհրդի նիստին տրված հանձնարարականների կատարում:

   Զեկուցող՝ Տեսչական մարմնի ղեկավար Արմեն Կոտոյան

2. Շուկայի վերահսկողության տեսչական մարմնի 2018 թվականի երկրորդ կիսամյակի ստացված բողոքների մասին վիճակագրության հաշվետվության ներկայացում:

   Զեկուցող՝ Տեսչական մարմնի ղեկավար Արմեն Կոտոյան

3. Շուկայի վերահսկողության տեսչական մարմնի 2018 թվական ընթացքում կատարված աշխատանքների հաշվետվության ներկայացում:

   Զեկուցողներ՝ Տեսչական մարմնի ղեկավար Արմեն Կոտոյան, ղեկավարի տեղակալ Ա.Մկրտչյան և Ա.Սարգսյան

4. Շուկայի վերահսկողության տեսչական մարմնի 2018 թվականի չորրորդ եռամսյակի կատարողականի գնահատականի հաշվետվության գործունեության ծրագրի հավանություն տալու վերաբերյալ:

   Զեկուցող՝ Ա.Սարգսյան:

ՈՐՈՇԵՑԻՆ – հաստատել օրակարգը:

կողմ 8

դեմ 0

1. **ԼՍԵՑԻՆ** - Արմեն Կոտոյանի զեկուցումը՝ նախորդ խորհրդի նիստին տրված հանձնարարականների կատարման մասին: Ա. Կոտոյանը մանրամասն ներկայացրեց Շուկայի վերահսկողության տեսչական մարմնի կողմից ԱԳԼՃԿ-ներում առկա խնդիրների վերաբերյալ տեղեկատվությունը՝ այն է գազը վաճառվում է խորանարդ մետրով սակայն պետք է կգ-ով: ԱԳԼՃԿ-ներում գազի վաճառքը շարունակվում է իրականացվել խորանարդ մետրերով: Պատճառը ակցիզային հարկի գանձումն է խորանարդ մետրերով: ԱԳԼՃԿ-ներում անցումը կիլոգրամներով վաճառքի ծրագրային որևէ խնդիր չի առաջացնի, այն հնարավոր է կարգավորել 2-3 օրում հատուկ մասնագետի կողմից: Ա. Կոտոյանը ներկայացրեց նաև ՀՀ տարածք ցեմենտ ներկրողների վերաբերյալ տեղեկատվությունը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Խորհրդի նախագահ Տիգրան Խաչատրյանը առաջարկեց 2019 թվականի ընթացքում իրականացնել ցեմենտի ոլորտային ստուգումներ և արդյունքների մասին տեղեկացնել խորհրդի անդամներին: Հայկ Այավզյանը հետաքրքրվեց արդյոք անհրաժեշտություն կա տեխնիկական կանոնակարգում համապատասխան փոփոխության՝ ակցիզային հարկի վերաբերյալ:

ՈՐՈՇԵՑԻՆ – Հավանություն տալ նախորդ խորհրդի նիստին տրված հանձնարարականների կատարմանը:

կողմ 8

դեմ 0

2. **ԼՍԵՑԻՆ** - Արմեն Կոտոյանի զեկուցումը՝ Շուկայի վերահսկողության տեսչական մարմնի՝ 2018 թվականի երկրորդ կիսամյակի ընթացքում, ստացած բողոքների մասին վիճակագրության հաշվետվության վերաբերյալ: Ա. Կոտոյանը ներկայացրեց՝ «2018 թվականի ընթացքում տեսչական մարմնի թեժ գիծ հեռախոսահամարին եղել է 134 զանգ, որից 100 զանգը վերաբերել է այնպիսի հարցերի որոնք դուրս են եղել Տեսչական մարմնի լիազորությունների շրջանակից:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Խորհրդի նախագահ Տ.Խաչատրյանը նշեց, որ անհրաժեշտ է քննարկել՝ սպառողների շահերի պաշտպանությունը, 2019 թվականի ընթացքում, Տեսչական մարմնին վերապելու հարցը:

ՈՐՈՇԵՑԻՆ – Հավանություն տալ Շուկայի վերահսկողության տեսչական մարմնի 2018 թվականի երկրորդ կիսամյակի ընթացքում ստացված բողոքների մասին վիճակագրության հաշվետվությանը:

կողմ 8

դեմ 0

3. **ԼՍԵՑԻՆ** - Արմեն Կոտոյանի զեկուցումը՝ Շուկայի վերահսկողության տեսչական մարմնի՝ 2018 թվական ընթացքում, կատարած աշխատանքների հաշվետվության վերաբերյալ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Խորհրդի նախագահ Տիգրան Խաչատրյանը, անդամներ Հայկ Այվազյանը և Կարեն Սահակյանը: Տ.Խաչատրյանին հետաքրքվեց վաճառվող ավտոմոբիլային բենզինի լիտրաժի հարցով: Ի պատասխան Ա.Կոտոյանը նշեց, որ շուկայում առկա է նշված խնդիրը և այն հանդիսանում է համակարգչային ծրագրի խնդիր, որի վերաբերյալ կատարվել է հարցում ԱԱԾ համակարգչային մասնագետին, ում պատասխանը դեռ չի ստացվել: Ինչպես նաև Ա. Կոտոյանը առաջարկեց որ յուրաքանչյուր բենզալցակայան պիտի ունենա չափանոթ, իսկ Տ.Խաչատրյանը հավելեց, որ չափանոթը պետք է դարձնել պարտադիր պայման և ավելացնել նախատեսվող վարչական տուգանքի չափը, առաջարկեց սպառողին դարձնել վերահսկողության մասնակից:

ՈՐՈՇԵՑԻՆ – Հավանություն տալ Շուկայի վերահսկողության տեսչական մարմնի՝ 2018 թվական ընթացքում, կատարած աշխատանքների հաշվետվությանը:

կողմ 8

դեմ 0

4. **ԼՍԵՑԻՆ** – Արարատ Սարգսյանի զեկուցումը՝ Շուկայի վերահսկողության տեսչական մարմնի 2018 թվականի չորրորդ եռամսյակի կատարողականի գնահատականի հաշվետվություն գործունեության ծրագրի հավանություն տալու վերաբերյալ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Խորհրդի նախագահ Տիգրան Խաչատրյանը, անդամներ Հայկ Այվազյանը, Կարեն Սահակյանը և Ա.Մկրտչյանը: Տ.Խաչատրյանին հետաքրքրեց, թե ինչն է պատճառը՝ Տեսչական մարմնի կողմից կատարված աշխատանքները գնահատել բացասական: Ա. Սարգսյանը պատասխանեց, որ կատարողականի գնահատման մեթոդաբանության մեջ անհրաժեշտ է կատարել փոփոխություն որպեսզի առավել իրատեսական գնահատվեն կատարված աշխատանքները: Կ. Սահակյանը նշեց, որ ճիշտ չէ կատարած աշխատանքները գնահատել բացասական, քանի որ տեսչական մարմնի կողմից կատարվել են ծավալուն և պատասխանատու աշխատանքներ: Ա.Մկրտչյանը նշեց, որ տեսչական մարմնի կողմից 2018 թվականի ընթացքում ՀՀ կառավարություն են ներկայացվել թվով 7 օրենսդրական առաջարկներ, որոնք դեռ քննարկման փուլում են և չեն մերժվել՝ այսինքն Տեսչական մարմինը իր առջև դրված խնդիրների լուծման շրջանակում իրականացրել է իր պարտականությունները:

ՈՐՈՇԵՑԻՆ – Հավանություն տալ Շուկայի վերահսկողության տեսչական մարմնի 2018 թվականի չորրորդ եռամսյակի կատարողականի գնահատականի հաշվետվությանը:

կողմ 8

դեմ 0

Խորհրդի նախագահ՝ _____ **Տիգրան Խաչատրյան**

Խորհրդի անդամներ՝ _____ **Հայկ Այվազյան**

_____ **Ալբերտ Բաբայան**

_____ **Մելիտա Հակոբյան**

_____ **Աբգար Մկրտչյան**

_____ **Կարեն Միրզաբեկյան**

_____ **Կարեն Սահակյան**

Քարտուղար՝ _____ **Սուրեն Պետրոսյան**